DOI: 10.61760/18290108-srn.25.4-97

«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՎԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ*

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, պահեստազորի գնդապետ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Պատմության ընթացքում մշտապես ի հայտ են եկել զինված պայքարի նոր եղանակներ ու մեթոդներ և նորովի իմաստավորվել են անցյալի ավանդական ձևերը: Եթե անցյալի պատերազմներում հիմնական շարժիչ ուժն ու պատերազմավարության բնույթի փոփոխության հիմնական գրավականը ՍՈՏ-ն էր, ապա արդի պատերազմներում ավելի հաճախ են կիրառվում նաև պայքարի ոչ ռազմական ձևերն ու եղանակները: Ավելին. արդի պատերազմներին բնորոշ են նորագույն տեխնոլոգիաներով պատրաստված ՍՈՏ-ները, պայքարի ռազմական ու ոչ ռազմական, ավանդական և ոչ ավանդական ձևերի ու եղանակների համադրությունը: Հարկ է նշել, որ համընդհանրացման համատեքստում արմատապես փոխվում են պատերազմներ վարելու շարժառիթներն ու մոտեցումները[1]: Օրինակ՝ եթե նախկինում պատերազմի հիմնական նպատակներն էին գոյատևումը, ռազմաավարին տիրանալն ու հակառակորդի տարածքը գրավելը[2], ապա այսօր հավանական հակառակորդի համար ոչ պակաս կարևոր է նաև պայքարը բնական ռեսուրսների (այդ թվում՝ ոչ միայն էներգետիկ, այլև ներկայումս արդեն խիստ արդիական դարձած խմելու ջրի ռեսուրսների), ինչպես նաև տնտեսական, աշխարհաքաղաքական վերահսկողության համար: Եվ նա կարող է դա անել ոչ թե հակառակորդի տարածքը գրավելով, այլ քաղաքական-դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական-հոգեբանական ազդեցության բազմաթիվ գործիքներով, որոնք ի վերջո հանգեցնում են հակառակորդի քայքայմանը ներսից: Պատերազմների սերունդները փոխարինում են միմյանց և յուրաքանչյուր ժամանակահատվածում ձեռք են բերում ուրույն դիմագիծ:

Նորագույն շրջանում հայտնի են տարբեր տեսակի պատերազմներ և պատերազմավարման եղանակներ: Դրանք մշտապես զարգանում են տեխնոլոգիական կատարելագործմանը զուգընթաց: Տվյալ համատեքստում տեխնոլոգիաների ու, մասնավորապես, արհեստական բանականության

* Հոդվածն ստացվել է 17.06.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 28.10.2025:

[1] Տես *А. Третьякова.* Факторное влияние на эволюцию военных конфликтов XX века и в начале XXI века. «Угрозы и безопасность», 2014, № 25:

[2] Տես *М. Дэйви.* Эволюция войн. М., с. 18:

արագընթաց զարգացմամբ էականորեն փոխվելու են նաև ապագա պատերազմների էությունն ու բնույթը, դրանց վարման սկզբունքներն ու կառավարման համակարգերը:

Պետք է հաշվի առնել, որ ինչպես ներկայումս, այնպես էլ ապագայում պատերազմներն ընթանալու են միաժամանակ տարբեր ՌԳԹ-ներում՝ բազմատիրույթ կամ բազմաժամանակույթ պատերազմավարության անհրաժեշտ գործիքարանով հագեցած ռազմական ու ոչ ռազմական հատուկ օպերացիաների վարմամբ (օրինակ՝ ըստ «Բազմատիրույթ օպերացիաներ» հայեցակարգի), կառավարման համակարգերի տեխնոլոգիական զարգացման շնորհիվ ձեռք բերված ժամանակի իրական ռեժիմում՝ առանց մարտավարական և օպերատիվ դադարների, ներառելու են պատերազմավարության օդային, ցամաքային, ծովային և կիբեռ- տիրույթները, աչքի են ընկնելու առաջանցիկության, ռազմավարական նախաձեռնության նվաճման և առաջադրանքային կառավարման սկզբունքների կիրառմամբ: Ապագայի բոլոր պատերազմներին բնորոշ են լինելու հիբրիդային, անհամաչափ և անուղղակի գործողությունները:

Վերջին տարիներին զգալի տեղաշարժեր են կատարվել ինչպես աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական առումներով, այնպես էլ ռազմավարությունների մշակման գլխավոր ուղենիշների, արդի պայմաններին և մարտահրավերներին դրանց համապատասխանեցման իմաստով: Հետևաբար անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ռազմավարությունների մշակման գործում իրադարձությունների և զարգացումների հարահոս ու արագ փոփոխվող ներկա պատկերն ստիպում է հետևել ամենաթարմ ռազմավարական հայեցակարգներին, մոտեցումներին և հետագա զարգացումներին՝ հայեցակարգների ու ռազմավարությունների փոփոխման «զարկերակն զգալու» համար:

Այդպիսի հատկանշական օրինակ կարող է համարվել 2025 թ. հունիսի 24–26-ը Հաագայում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը, որտեղ վերահիմաստավորվեցին 2022 թ. հունիսի 28–30-ը Մադրիդում կայացած գագաթնաժողովի արդյունքները և ընդունված «360°» հայեցակարգային մոտեցումը, որում հաշվի էին առնված ռուս-ուկրաինական ընդդիմամարտությունն ու նաև դրա ռազմաբեմում ընթացող զարգացումները[3]:

Ներկայիս և ապագայի պատերազմների հնարավոր բնույթի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներ տալիս են հատկապես արդի քաղաքական և ռազմական ռազմավարական հայեցակարգները: Դրանցում առանձնապես կարևորվում է, թե ինչ տիպի պատերազմի է պատրաստվում պետությունը կամ ինչ տիպի պատերազմից է պատրաստվում պաշտպանվել՝ ջախջախիչ

[3] Տես “2022 NATO Summit”, 1 July 2022 (https://www.nato.int/cps/en/natohq/news_196144.htm); *նաև՝* “NATO 2022 Strategic Concept”. Adopted by Heads of State and Government at the NATO Summit in Madrid, 29 June 2022 (https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2022/6/pdf/290622-strategic-concept.pdf); “NATO Secretary General press conference previewing the NATO Summit in Madrid”. “NATO News”, 27.06.2022 (https://www.youtube.com/watch?v=C2NsQ_xH3a0):

ու ոչնչացնող, թե քայքայիչ ու հյուծող: Դրանից են կախված պաշտպանական ու ռազմական բարեփոխումները, ՁՈՒ-ի կիրառման ռազմավարական պլանավորումը և ռազմական ծախսերը, ռազմական տեխնիկայի տեսակների ընտրությունն ու ձեռքբերման ծավալները և այլն:

Այս համատեքստում ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունն իր ուղղակի ազդեցությունն է ունենում նաև ռազմական ռազմավարության որոշ հասկացությունների ու կարգախմբերի վրա՝ դրանց նկատմամբ ավանդաբար ընդունված մոտեցումները և դրանց ընկալումները, ձևակերպումներն ու սահմանումները վերաիմաստավորելու և վերաձևակերպելու անհրաժեշտությամբ:

Սույն հոդվածի նպատակն է վերջին տասնամյակների մասնագիտական գրականության ուսումնասիրության հիման վրա վերլուծել «ռազմավարական նախաձեռնություն» հասկացությունը՝ նորովի մեկնաբանելով այն: Նախ. նշենք ռազմավարական նախաձեռնության ավանդական ձևակերպումը: Ռազմավարական նախաձեռնությունը «ռազմավարական մասշտաբով և երկար ժամանակ իր կամքը հակառակորդին թելադրելու, պայքարի անշահավետ միջոցների և ձևերի կիրառումը, անբարենպաստ պայմաններում գործողությունների կատարումը նրան պարտադրելու հնարավորություն է, որն ստեղծվում է գործողությունների ու միջոցառումների համալիրով»[4]: Դրա շնորհիվ ստեղծվում է որոշումների կայացման, յուրային զորքերի գործողությունների այս կամ այն եղանակի ընտրության ազատություն և թշնամու ուժերի գործողությունների սահմանափակում: Ձեռք է բերվում ուժերի ծավալման առումով թշնամուց առաջ անցնելու, նրան հարվածներ հասցնելու և ակտիվ գործողություններ վարելու, զինված ուժերն ավելի նպատակահարմար և հակառակորդի համար անսպասելի եղանակով կիրառելու, ուժերի բարենպաստ քանակական ու որակական հարաբերակցությունն իր օգտին փոխելու և պահպանելու միջոցով: Ռազմավարական նախաձեռնությանը տիրելու շնորհիվ հնարավոր է լինում ընտրել հակառակորդին հարվածներ հասցնելու պահը, վայրը ու եղանակը, վարել տարբեր տեսակի գործողություններ, թշնամուն ստիպել հրաժարվել իր նպատակներից, իր գործողությունները կատարել անբարենպաստ իրադրությունում:

Ռազմավարական նախաձեռնությանը տիրումը և դրա պահպանումը պատերազմի և ռազմավարական օպերացիաների (գործողությունների) հաջող վարման հիմնական պայմաններից մեկն է: Ռազմավարական նախաձեռնության համար պայքարը բոլոր տեսակի ժամանակակից օպերացիաների բոլոր տարածական տիրույթներում պատերազմների վարման ամենացայտուն բնութագրիչ հատկություններից մեկն է[5]:

Կարծում ենք, որ ռազմավարական նախաձեռնությունը պետք է գնահատել նաև արդի հայեցակարգների, մասնավորապես՝ Զոն Բոյդի հայեցակար-

[4] Տես «Война и мир в терминах и определениях». Под ред. Д. О. Рогозина. М., 2023, с. 157:

[5] Տես նույն տեղում:

գի համատեքստում: Նախ. պարզաբանենք այս հայեցակարգը: Ամերիկացի ռազմական ռազմավարագետ, ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի գնդապետ Զոն Բոյդի հեղինակած **«ԴԿՈՁ» («Դիտում – Կողմնորոշում – Որոշում – Ձեռնարկում», *“Observe – Orient – Decide – Act” (“OODA loop”))* փուլաշրջանի, կամ հանգույցի,** բանաձևման հիմքում պատերազմի արագընթաց ու դինամիկ բնույթի հաշվառմամբ դրված է հակառակորդի նկատմամբ առաջանցիկության գաղափարը: Ըստ Բոյդի՝ սկզբունքորեն կարևոր է երկու հանգամանք: *Առաջինն* այն է, որ հաղթելու համար անհրաժեշտ է թշնամուց ավելի արագ անցնել փուլաշրջանը, այսինքն՝ պետք է մտածել, որոշումներ ընդունել և գործել առաջանցիկության սկզբունքով: *Երկրորդ* տարրի էությունն է հակառակորդի ԴԿՈՁ հանգույցում հայտնվելն ու այնտեղ մնալը: Դա նշանակում է հակառակորդի պատասխան որոշումների և գործողությունների մեկուսականխում[6]: Այլ կերպ ասած՝ պետք է ավելի արագ ստանալ անհրաժեշտ տեղեկություններն ու ավելի արագ կայացնել համապատասխան որոշումները, հետո վերլուծել արդյունքներն ու կրկին գործել: Ընդ որում, անհրաժեշտ է հակառակորդին զրկել նման հնարավորությունից:

Գաղտնիք չէ, որ պատերազմում բոլոր գործողությունները հիմնված են կա՛մ նախաձեռնություն դրսևորելու, կա՛մ հակառակորդի գործողություններին պատասխանելու վրա: Այսպիսով՝ մենք, նախաձեռնությանը տիրելով, թելադրում ենք հակամարտության մեր պայմանները և հակառակորդին ստիպում ընդունել դրանք:

Նախաձեռնությունը, անշուշտ, գործողության նախընտրելի ձևն է, քանի որ միայն նախաձեռնության միջոցով մենք կարող ենք ի վերջո մեր կամքը պարտադրել հակառակորդին, ինչը նշում էր դեռ Կառլ ֆոն Կլաուզևիցը: Ընդսմին պատասխան գործողությունները, որպես կանոն, արդեն հետապնդում են միայն հակառակորդի մտադրություններին կամ գործողություններին արձագանքելու, դիմակայելու նպատակ: Այսինքն՝ Բոյդի առաջանցիկության սկզբունքի համատեքստում մենք, շահելով նախաձեռնությունը, մեկ փուլաշրջան առաջ ենք անցնում հակառակորդից՝ մշտապես նրան թողնելով հանգույցի և անորոշության մեջ: Ավելին. տեղեկատվական-քարոզչական օպերացիաների միջոցով հնարավոր է հակառակորդին զցել այնպիսի անորոշության ու մոլորության մեջ (այսպես կոչված՝ «պատերազմի մշուշում»[7]), որ օբյեկտիվ իրականության նրա ընկալումը ձևախեղվի, և նա մշտապես մնա հանգույցում՝ հետևելով մեր ձեռնարկումներին և դրանով իսկ մեզնից հետ մնալով չորս գործողությունով՝ մեկ փուլաշրջանով:

Նախաձեռնությանը տիրելու և պահպանելու դեպքում ապահովվում է գործողությունների **դինամիկ բնույթը**, այդ թվում՝ **արագությունը**, ինչը ժամանակակից պատերազմների գլխավոր բնութագրիչ գծերից ու հիմնական գործոններից մեկն է: Ժամանակակից աշխարհում արագությունը հսկա-

[6] Տես *John Boyd.* The Essence of Winning and Losing, 28 June 1995 (https://www.danford.net/boyd/essence.htm):

[7] Տես *К. Клаузевиц.* О войне. Пер. с нем. М.- СПб., 2007, с. 36:

յական դեր է խաղում, ընդ որում՝ բոլոր ասպարեզներում, և հատկապես՝ ռազմական ոլորտում: Այս համատեքստում հարկ է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաներով և արհեստական բանականությամբ ստեղծված նոր հնարավորությունների շնորհիվ էականորեն կրճատվում է տարածական, ժամանակային և տեղեկատվական տարանջատվածությունը զորքերի և կառավարման կենտրոնների միջև, և պատերազմական գործողությունները դառնում են շատ ավելի դինամիկ, ինտենսիվ, ժամանակի իրական մասշտաբում կառավարվող և հետևաբար արդյունավետ՝ մարտական գործողությունների գերհագեցվածության և ակտիվության պատճառով մարտավարական և օպերատիվ դադարների վերացմամբ: Այստեղից էլ ակներև է դառնում անօդաչու թռչող ապարատների, գերճշգրիտ զենքերի, արհեստական բանականությամբ համալրված՝ կառավարման ավտոմատ համակարգերի, արբանյակային կապի, հակառակորդի կոորդինատների հաղորդման ժամանակի, մարտական ստորաբաժանումների շարժունակության, ինչպես նաև կատարողին հրամանները փոխանցելու արագության մեծ նշանակությունը:

Ֆրանսիացի փիլիսոփա, պոստմոդեռնիզմի տեսաբան Պոլ Վիրիլիոն (1932-2018), որն ուսումնասիրել է ժամանակակից տեխնիկական քաղաքակրթության համար արագության կարևորությունը, առաջարկել է հատուկ տերմին՝ **«դրոմոկրատիա»** (կազմված է հունարեն *դրոմոս* (արագություն) և *կրատոս* (իշխանություն) բառերից[8], այստեղից էլ գերարդիական՝ «դրոմոկրատական հասարակություն» հասկացությունը: «Դրոմոկրատիա» տերմինը ածանցված է հեղինակի «դրոմոլոգիայի» տեսությունից[9], որով աշխարհն ու իրականությունը մեկնաբանվում են որպես արագության արդյունք: Իր «Արագություն և քաղաքականություն» աշխատության մեջ նա պատմությունը, քաղաքականությունը և հասարակությունը ներկայացնում է արագության համատեքստում՝ համոզիչ փաստարկներով մեկնաբանելով այդ թեզը: Վիրիլիոն պնդում է, որ արագությունը դարձել է առաջընթացի կարևորագույն, թերևս՝ միակ, գործոն ու չափանիշ[10]: Արագությունը «բարձր աստիճանի համընդհանրացման» նշան է, որի ամենաակնառու դրսևորումը մոլորակի ցանկացած կետից ցանկացած այլ կետ տեղեկույթի ակնթարթային փոխանցումն է, իսկ դրոմոլոգիական իրականությունը հեռավորության վրա այդպիսի փոխազդեցությունն է:

Վիրիլիոյի տեսության հիմնական եզրակացությունն այն է, որ նոր քաղաքակրթական պայմաններում հաղթում է ոչ թե նա, ով ավելի ուժեղ է, խելացի կամ ավելի լավ պատրաստված, այլ նա, ով ավելի արագ է: Արագությունն ամեն ինչ է: Այստեղից էլ առաջանում է ձգտումը՝ ցանկացած միջոցներով մեծացնելու պրոցեսորների և, համապատասխանաբար, բոլոր թվային գործո-

[8] Տես *Paul Virilio.* The Original Accident. Cambridge, 2007, P. 101:

[9] Տես *P. Virilio.* Vitesse et politique: Essai de dromologie. Paris, 1977 (https://monoskop.org/images/c/ca/VIRILIO_Paul_-_1977_-_Vitesse_et_politique.pdf):

[10] Տես *Бенджамин Нойс.* Метафизика дронов, 8 июня 2023 (https://spacemorgue.com/drones/):

ղությունների արագությունը: Հենց սրա վրա է կենտրոնացած այսօր նորամուծական տեխնիկական միտքը: Բոլորը մրցում են արագության համար: Ավելին. ով արագ է դիտում, կողմնորոշվում, գնահատում, վերլուծում և գործում, նա ավելի մեծ հավանականությամբ կարող է ոչ միայն **արդյունավետ կերպով պատերազմել**, այլև **կանխել հնարավոր պատերազմը**:

Եվ այսպես. վերլուծելով հետարդյունաբերական հասարակությունում արագության երևույթը՝ Վիրիլիոն ստեղծում է հատուկ հասկացութային ապարատ[11], որում նրա հիմնական հայեցակարգային հասկացություններն են **«դրոմոլոգիան», «դրոմոկրատիան», «դրոմոսկոպիան»**[12] և **«դրոմոսֆերան»**[13]: Վիրիլիոյի՝ «դրոմոլոգիայի» հայեցակարգային մշակումը, այսինքն՝ արագության փիլիսոփայական տեսությունը՝ որպես համալիր և բարդ սոցիալ-մշակութային ու գեղագիտական երևույթ, շատ հարմար է ներկայիս տեղեկատվական հասարակության հետարդիական (պոստմոդեռնիստական) վերլուծության համար: Նրա «Տեղեկատվական ռումբ» աշխատությունը նվիրված է «համակարգչային հեղափոխության» մեկնարկից հետո տեղեկույթի ազդեցության առանձնահատկությունների վերլուծությանը[14]:

Ժամանակակից աշխարհը պայքար է արագացման համար, ընդսմին նա, ով ավելի արագ է, ստանում է ամենակարևոր մրցանակը՝ իշխանությունը, գերակայությունների բոլոր՝ քաղաքական, ռազմական, տեխնոլոգիական, տեղեկատվական, տնտեսական, մշակութային և այլ իմաստներով ու չափումներով հանդերձ: Իշխանության նվաճման համատեքստում դրոմոկրատիայի կառուցվածքում ամենաարժեքավորը դարձյալ տեղեկույթն է: Հենց տեղեկույթի փոխանցման արագությունն է իշխանության կոնկրետ արտահայտությունը: Դա վերաբերում է թե՛ համաշխարհային բորսաների գործունեությանը, թե՛ ռազմական գործողությունների վարմանը, թե՛ այլ գործողությունների: Նա, ով կարողացավ որևէ բան անել ավելի արագ, հապաղողի նկատմամբ ստանում է լիակատար իշխանություն: Ընդ որում, դրոմոկրատիան՝ որպես գիտակցաբար ընտրված ռազմավարություն, ժամանակին տիրելու, ժամանակին տիրապետելու ուրույն եղանակ է, որը կարող է անգամ հանգեցնել տարօրինակ էֆեկտների, որտեղից էլ բխում են «ապագայական (ֆյուչերային) գործարքները», ինչպես նաև նման բնույթի այլ ֆինանսական երևույթներն ու մեխանիզմները, որոնց դեպքում հիմնական գործարքները կատարվում են այնպիսի բաներով, որոնք դեռ գոյություն չունեն:

[11] Տես *Paul Virilio.* The Original Accident, PP. 83-101:

[12] Տես նույն տեղում, էջ 92:

[13] Տես նույն տեղում, էջ 83:

[14] Տես *Paul Virilio.* The Information Bomb. London, New York, 2000, Chap. 3, PP. 7-18 (https://soundenvironments.files.wordpress.com/2011/11/virillio-information-bomb.pdf); *նաև՝ В. В. Буряк.* Динамика культуры в эпоху глобализации: ноосферный контекст. 6.2. Ускорение культурной глобализации: философия скорости Поля Вириллио. Монография. Симферополь, 2011, с. 355 (https://refdb.ru/look/3514038-pall.html):

ՁԼՄ-ների ոլորտում դրոմոկրատիայի իդեալը մի այնպիսի իրադարձության մասին առաջինը հայտնելն է, որը դեռ տեղի չի ունեցել, բայց շատ հավանական է, որ շուտով տեղի կունենա: Սա պարզապես կեղծիք, կամ ֆեյք, չէ, սա աշխատանք է հնարավորի, հավանականի ոլորտում: Եթե ապագայի հավանական իրադարձությունն ընդունվի որպես արդեն կատարված, ապա մենք կշահենք ժամանակ, ինչը նշանակում է, որ ձեռք կբերենք իշխանություն: Այլ բան է, որ դա կարող է նաև առհասարակ տեղի չունենալ: Ու թեև դա հնարավոր է, բայց երբեմն սպասումների ձախողումը այդքան էլ ծայրահեղ կարևոր չէ, մինչդեռ, հաստատված կանխատեսումը, որը նախապես ընդունվել էր որպես կատարված փաստ, հսկայական օգուտներ և առավելություններ է տալիս:

Կարծում ենք, որ այս երևույթը լիովին տեղավորվում է հիբրիդային պատերազմավարության ներկայումս կիրառվող գործիքակազմերի, այդ թվում՝ տեղեկատվական-հոգեբանական օպերացիաների, տրամաբանության մեջ, քանի որ, մեր ձևակերպմամբ, հիբրիդային պատերազմի հետևանքով գոյություն չունեցողը դառնում է գոյություն ունեցող[15]: Տվյալ երևույթը ցցուն կերպով դրսևորվում է, օրինակ, ռուս-ուկրաինական առճակատման ամբողջ ընթացքում[16]:

Վերլուծելով դրոմոկրատիայի էությունը՝ հանգում ենք այն մտքին, որ ժամանակի տարերքը բարդ է իր բովանդակությամբ, և նա, ով կարողանում է իրեն ենթարկել այդ տարերքը, ստանում է համատարած ու համընդհանուր իշխանություն: Գերարագությունների զարգացման հետ մեկտեղ իրականությունն ինքնին բեկվում է, երբեմն՝ ձևախեղվում, և դրանում սկսում են գործել անգամ ոչ դասական ֆիզիկայի օրենքները: Ըստ Վիրիլիոյի՝ հենց այս ոլորտում է ներկայումս մղվում համամոլորակային պայքարը իշխանության համար: Դրոմոկրատիայի տեսության դրսևորումներին մենք հանդիպում ենք նաև առավելապես կիրառական և ոչ այնքան փիլիսոփայական ոլորտում՝ ցանցակենտրոն պատերազմների տեսության մեջ*: Նման պատերազմի հիմնական առանձնահատկությունը առանձին ստորաբաժանումների և հրամանատարական կենտրոնների միջև տեղեկույթի փոխանցման արագությունն է:

[15] Տես *Բ. Մ. Աղաջանյան, Ա. Մ. Շահվերդյան,* Տեղեկատվական պայքարի մեթոդների և հնարների օգտագործումը հիբրիդային պատերազմավարության շրջանակներում: «ՀԲ», 2023, հմ. 4:

[16] Տես *Բ. Մ. Աղաջանյան, Ա. Մ. Շահվերդյան,* Հիբրիդային պատերազմը և դրա դրսևորումները Արևմուտք–Ռուսաստան առճակատման համատեքստում: «ՀԲ», 2022, հմ. 3:

* «Ցանցակենտրոն պատերազմը», կամ «ցանցակենտրոն ռազմական գործողությունները», «ցանցակենտրոն օպերացիաները (գործողությունները)» («Network-centric warfare», «Network-centric operations»; «сетецентрическая война», «сетецентрические боевые действия», «сетецентрические операции») ռազմական դոկտրին է (կամ պատերազմի հայեցակարգ), որն առաջին անգամ կիրառել է ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը 1990-ական թվականներին (տես *Է. Կ. Սարկիսյան, Ա. Զ. Պետրոսյան,* Ցանցակենտրոն պատերազմը որպես նոր ձևի կազմակերպվածք և կառավարման նոր համակարգ: «ՀԲ», 2022, հմ. 1):

Դրան հասնելու համար զինծառայողներն ու մարտական միավորները համալրվում են բազմաթիվ տարբեր տեսախցիկներով և այլ զգայարաններով, որոնցից ստացված տեղեկությթը միավորվում է մեկ դաշտում: Աճում են կոպտերների, ԱԹԱ-ների և արբանյակների հաղորդած տվյալների ծավալները: Դրանք ուղղակիորեն ինտեգրված են մարտական և կրակային միավորներին: Եվ այսպիսի ամբողջական ցանցային ինտեգրումն ապահովում է ամենագլխավոր առավելությունը՝ արագությունը:

Ցանցակենտրոն պատերազմների տեսության մեջ ընդունելի է համարվում նաև այն մոտեցումը, որ որոշումների կայացման արագությունը հաճախ դրանց անբավարար մշակվածության արդարացման պատրվակ է, և հաճախ լինում են նաև բավական սխալ հաշվարկներ և բացթողումներ: Բայց արագ գործելիս սխալ թույլ տալու դեպքում միշտ ժամանակ կա այն ուղղելու համար: Այստեղ, կարելի է ասել, օգտագործվում է ծրագրահենային «կոտրման», կամ *«DDoS»* հարձակումների, սկզբունքը. գլխավորը հակառակորդի թույլ կետերի հայտնաբերմամբ նրա զորքերի տեղաբաշխման ամբողջ երկայնքով հարվածելն ու ջախջախելն է: Իհարկե, կորուստները կարող են բավական մեծ լինել, բայց արդյունքները, հաջողության դեպքում, շատ ավելի նշանակալից են:

Ցանցակենտրոն պատերազմները որպես իրենց անբաժանելի բաղադրիչ ներառում են նաև տեղեկույթի բաց աղբյուրները: Դրանք ոչ թե սոսկ ուղեկցում են ռազմական գործողությունները և հաղորդում այն, ինչը ձեռնտու է, այլև այն, ինչը ձեռնտու չէ՝ թաքցնելով կամ խեղաթյուրելով տեղեկույթը անճանաչելիության աստիճանի և, բացի այդ, ձեռնածությունների են ենթարկում հավանական ապագան: Եվ այստեղ դարձյալ գործում է դրոմոկրատիայի սկզբունքը: Այն, ինչ մենք այսօր ընկալում ենք որպես կեղծիք, ֆեյք, ոչ այլ ինչ է, քան հնարավոր ապագայի շոշափում և արհեստական խթանում: Պարզվում է, որ շատ կեղծիքներ դատարկ են, ճիշտ այնպես, ինչպես ծրագրահենության ժամանակ անվտանգությունը ճեղքելու փորձերը հաճախ ապարդյուն են լինում, սակայն ժամանակ առ ժամանակ այդ կեղծիքները հասնում են իրենց նպատակին, և այդ դեպքում հնարավոր է լինում համակարգը գրավել և ենթարկել[17]:

Այսպիսով՝ այս ամենից կարելի է եզրակացնել, որ կարծրատիպային մտածողությունը, ստատիկ և քարացած չզարգացող մոտեցումները չեն նպաստում արդյունավետ պատերազմավարությանը (պայքարի նոր եղանակների կիրառմանը և այլն) ու դրա նորովի իմաստավորմանը և չեն բավարարում արդի պահանջներին: Բացի այդ, կարևոր է նաև արձանագրել, որ ռազմական ռազմավարության՝ հոդվածում արծարծված ու վերլուծված

[17] Տես *Александр Дугин.* Дромократия. Скорость как власть (https://zavtra.ru/blogs/dromokratiya_skorost_kak_vlast_); *նաև՝* “Александр Дугин: Творение империи и скорость войны” (https://izborsk-club.ru/24651); “Александр Дугин: Войну выиграет скорость. У России нет права на дрёму и заторможенность”, 16.10.2022 (https://antifashist.com/item/aleksandr-dugin-vojnu-vyigraet-skorost-u-rossii-net-prava-na-dremu-i-zatormozhennost.html):

հասկացություններին տիրապետումը, արդիական ընկալումն ու կիրառումը հնարավորություն են տալիս ոչ միայն արդյունավետորեն պատերազմելու, այլև, հնարավորության դեպքում, կանխելու պատերազմի բռնկումը, զսպելու հակառակորդի ռազմատենչ հռետորաբանությունն ու գործողությունները: Վերջիվերջո, պատերազմը կանխելն այսօր շատ մեծ իմացություն, խոհեմություն ու ջանք է պահանջում, իսկ հակառակորդին ռազմավարական մակարդակում զսպումն արդի աշխարհում նախապատվելի և արդյունավետ ռազմավարություն է: Այս համատեքստում տեղին է մեջբերել չինացի մեծանուն ռազմավարագետ, ռազմական տեսաբան և զորավար Սուն Ցզիի՝ պատերազմը կանխող և հակառակորդին զսպող միտքը, որը նա արտահայտել է դեռ 2500 տարի առաջ. «Հարյուր անգամ մարտ մղել և հարյուր անգամ հաղթանակ տանել դեռ չի նշանակում լավագույնից լավագույնը: Լավագույնից լավագույնն այն է, որպեսզի հնազանդեցնել հակառակորդի բանակն առանց մարտի»[18]:

[18] *Սուն Ցզի,* Երկ ռազմարվեստի մասին: Ե., 2020, գ. 3, էջ 15:

ПОЛЕМОЛОГИЯ

НОВАЯ ТРАКТОВКА И АНАЛИЗ ПОНЯТИЯ «СТРАТЕГИЧЕСКАЯ ИНИЦИАТИВА»

А. М. ШАХВЕРДЯН, полковник запаса, кандидат политических наук, доцент, ученый-аналитик Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Изменение характера современных войн оказывает непосредственное влияние и на некоторые понятия и категории военной стратегии, порождая необходимость переосмысления и переформулирования традиционно принятых подходов к ним, их восприятия и определения. Новое осмысление этих понятий диктуется необходимостью отражения в них актуальных вызовов и принципов ведения войны на основе концепций с новейшим оперативно-стратегическим охватом. Данное требование касается, в частности, такого важного для военного искусства понятия «стратегическая инициатива», переосмысление которого на основе анализа в свете современных концепций осуществления операций и военных действий оперативно-стратегического масштаба позволит глубже оценить его значение в процессе стратегического планирования применения ВС.

С учетом современных способов ведения операций и войн в целом делается акцент на их ускорении и быстром овладении и сохранении стратегической инициативы на принципе упреждения. В этом контексте автор ссылается на теорию «дромократии» известного

философа Поля Вирильо, по-новому рассматривая такие основополагающие понятия, как «дромология», «дромоскопия» и «дромосфера». В этом плане, по мнению автора, новое осмысление теории дромологии может существенно способствовать эффективности ведения войны, динамичности и скоротечности вооруженных и невооруженных способов борьбы и действий, быстрому и качественному принятию решений, сокращению этапа управления, что необходимо учитывать в процессе реформирования и развития Вооруженных сил.

WAR STUDIES

THE NOVEL INTERPRETATION AND ANALYSIS OF THE NOTION OF “STRATEGIC INITIATIVE”

A. M. SHAHVERDYAN, Colonel (Res.), PhD in Political Science, Associate Professor, Research Fellow, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Changing the character of modern warfare immediately affects also a number of notions and categories of military strategy, giving rise to the necessity of apprehending and reformulating traditional approaches to them, their perception and definition. The new understanding of these notions is dictated by the necessity of reflecting actual challenges and warfare principles in them based upon the concepts with the modern operational-strategic incidence. This requirement relates, in particular, to “strategic initiative”, a concept important for the military art, the analysis-based reapprehension of which in light of modern concepts of conducting operations and military actions of operational-strategic scale will allow to deeply evaluate its significance in the process of the Armed Forces employment strategic planning.

With the account of modern means of conducting operations and wars in general, the acceleration, seizure and maintenance of the strategic initiative are being accentuated. In this context the author refers to the theory of “dromocracy” by the renowned philosopher Paul Virilio, and de novo considered such fundamental notions as “dromology”, “dromoscopia” and “dromosphere”. In this regard, the author supposes that the novel interpretation of the theory of dromology can considerably facilitate the effective conduct of war, the fleeting nature and fluidity of armed and non-armed means of struggle and actions, the quick and good decision-making, the reduction in the management phase, which should be taken into account in the process of reformation and development of the Armed Forces.